

# ՇՆԱԲԹ

հասակ եւ դրամ որկեյ  
խմբագրութեան հասցիին



РЕДАКЦИЯ НА ВѢСТНИКЪ  
„ШАРЖУМЪ“  
Варна.

Redaction du journal  
„Charjoum“  
Varna (Bulgarie).

*Weekly Sharnjougane  
N. 4  
Sharnjougane (Petroule)*

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ հասկար սարե-  
կան 10 ֆրակ. վեցաւ-  
սեայ 5 ֆրակ. : Արսասահ-  
ւանի հասկար սարեկան 12  
ֆրակ. վեցաւսեայ 6 ֆր.

ԿԱՆՆԵՆԻ ԷՎԻԹԵԼԻ

Գրութիւնք

Ծանուցումք զոր 20 ամե-  
քիւն է :

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՍԵԻ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻ ԶՈՐԵԲԵՍԱԹԻ ԵՒ ՇՆԱԲԹ ՈՐԵՐԸ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

## ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

—(—)

Անորակիւ, Գաւեր-Արշալիր. —  
Կրուկոտոց, (Բերքուած) Շաւասպ. —  
Մսի յեղափոխութիւնը, Վարչո. —  
Նոր Երեւոյք մը. — Փայտասկանի  
Յիշատակարան, Շաւարշ. — Տեւտա-  
կան, Տիգրան Ա.ձեւեւան. — Վարդ-  
Պատրիկոյի Յիշատակարանը. — Գա-  
ղափական Դիպիտ, (Խմբագրական  
«Փան») . — «Շարժում»ի պատաս-  
խանները. — Տանկերեւն :՝

## ԱՆՈՐԱԿԵԼԻ

—(—)

Վառնան այլ եւս դադարած է  
առաջին տեղը բռնելէ ներքին  
կուռնեցող գաշտին վրայ : Այս  
անգամ տխուր արձագանգը տար-  
բեր տեղէ մըն է որ կուգայ, փի-  
լիպէէ. և այնպիսի շեշտով մը,  
որուն նմանը դուն ուրեք անս-  
նուած էր թէ մեր քաղաքին և  
թէ ուրիշ տեղերու ամենէն «ա-  
րիւնուշտ» օրերուն մէջ :

Վարդանանց հանգէսն է որ  
կը կատարուի : Ամէն գաղափարէ,  
սեռէ ու հասակէ հայեր համա-  
խմբուած են հոն, ու իրենց  
միտքով ու զգացումներով դա-  
րեր կը ճեղքեն դէպի ետ, ան-  
գամ մըն ալ ըմբոշխնելու հա-  
մար փառքի այն հեշտանքը որ  
ամենուս ալ է : Ազգի մը տարբե-  
րը յօդողը անցեալի փառքը և  
սառապանքներն են . ինչպէս և  
ապագայի համար միեւնոյն իղ-  
ձերու և նպատակի գոյութիւնը,  
միեւնոյն յօժարութիւնները մեծ  
զոհողութիւններ ընելու :

Վարդանանց գիւցաղնութիւնը  
մեր պատմութեան այն փառա-  
ւոր էջերէն մէկն է որուն յիշա-  
տակը գերազանցապէս կրնայ  
թուլացնել մեր արդի երկպա-  
ռակութիւնները և հայուն սրտին  
ներշնչել այն ջերմիկ զգացում-  
ները զոր չէ կարելի ակնկալել  
ոչ մամուլի մէկ մասէն և ոչ ալ  
հոգեւորականութենէն :

Ասօ՞թ անոնց որոնք իրենց  
անձնական կիրքերով լեցուած,  
կը յանդգնին յիմարարար, հա-  
մակ որբութիւն բուրոյ այս հան-

դէսին վեհ նպատակը վրիպեցը-  
նել, խանգարել զայն և թունա-  
ւորել այն հոգիները, որոնք կը  
յուսային լաւագոյն արամադրու-  
թիւններով բաժնուիլ այդ հան-  
դէսէն : Ո՛չ մէկուն ներքին է այդ  
տխմար քաջագործութիւնը, ո՛չ  
պարզ անհատի մը և ոչ մանա-  
ւանդ յեղափոխականին որ ամէն  
բանէ առաջ պարտաւոր է ողջմը-  
տութեան, պաղարիւնութեան  
յատկութիւնները միացնել իր  
անձին վրայ : Ժամանակ է որ  
մեր Յեզ. Կուսակցութիւնները  
մաքրեն իրենց կարգերը շատ  
աքաղախ տարրերէ, համոզ-  
ուելով թէ՛ իրաւամբ կամ անի-  
րաւի իրենց վրայ է որ կը ծան-  
րանայ ամէն մէկ ընկերի ան-  
խորհուրդ աքարքը :

Դատապարտելով փիլիպէի  
տխրահուշակ մարտիկները ի-  
րենց այս տարօրինակ վարմուն-  
քին համար, որ երբեք արդա-  
րացում չկրնար ունենալ, չենք  
կրնար ամօթի չէկ երկաթով չի  
խարել նաև այն կարգ մը անձե-  
րը, որոնք մութ խորշերու մէջ  
ծածկուած, չար ոգիներու պէս  
գիշեր ցորեկ իւր կը թափեն,  
յարգ կը լեցնեն հայերու մէջ  
ծագած հակառակութեան բոցե-  
րուն վրայ :

Ատոնք են ահա ամենէն յան-  
ցաւորները, բուն ոճրագործնե-  
րը : Ատոնք, այդ պարոններն են  
որ միութեան անվերջանալի  
հարցը պատրուակ բռնած, գի-  
շեր ցորեկ կաշխատին պատ-  
ուարներ հիւսելու, որպէս զի  
երբեք չիրականանայ եղբայր-  
սիրութիւնը, խեղճ ու ատելու-  
թիւնը երբեք չի մարին մեր մէ-  
ջէն : Ատոնք, այդ ստորին աշ-  
խարհի արարածներն են որ ի-  
րենց խեղճ ու խելառ հրատա-  
րակութիւններով այնպիսի ժխոր  
մը կը հանեն, գործերը այնքան  
քառային, խլացուցիչ գրու-  
թեան մը կը յանգեցնեն, որուն  
մէջէն բանականութեան ձայնը  
չի լսուելու կը դատապարտուի :

Փոխանակ թողլու որ կիրքերը  
մարին, փոխանակ սատարելու որ  
փոխադարձ յարգանք, համա-  
րում հաստատուի զանազան տար-

բերու մէջ, և իրենց քթերովը  
պատուաւոր ժամագրավայր մը  
հանգիստանայ ուր թշնամութիւն-  
ները ցնդին, ձեռքերը միանան,  
անոնք ընդհակառակը սողունե-  
րու որջի մը կը վերածեն զայն :  
Հրճուանքով կը ծափահարեն աղ-  
գային մաքուր հանդէսի մը  
խանգարման առջեւ, և իրենց  
զործած քայքայումներուն տեսքը  
կը խնդացնէ զիրենք, ճիշդ այն  
հրէշային ժպիտով, զոր կուռնեայ  
գահիճը իր գլխատած գիակին  
առջեւ. Թուրքին ժպիտովը :  
ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԼԻՐ

## ԿԸՆԿԸՆՈՑ

—(—)

Սիրուն աղուր եւ անի,  
Չուրհե ելած երկիրս .  
Բաշերն ուսին՝ գեղակի  
Զարդն եր փրոտուած վերեւ վար :

Եւ երբ հագուած սարաւով,  
Սանձր քերնին, քաւքր վեր,  
Արշաւակի ինչպիսի հով՝  
Փոքորկալից կը քրոջի :

Աւրոյսն ապշած խեղալից՝  
Կը սեւեւեր իր աչքեր .  
Ի՞նչ, փոքորի՞կ եր անեղ,  
Ճըշխարսօրեկ չի գիտեր :

Լրճին աշունք՝ ուր որ ջիւջ  
Շաս կը խաղայ հովն աղու,  
Նըթոյգին տեսն ու խորխիւնջ  
Ճաւ եր եղած գորտերու :

Օր մը ժողով խորքեցաւ .  
Պրզիկ ու բոց վազեց շուս .  
Իւրաքանչիւր մէջ քերաւ  
Ինչ որ սրուես ունեւ գուս :

Խորխիւնջ փորձեց մեկն ի գուր,  
Կրուկոտոցի ձայն կեղար,  
Ճարկիւն, ըսաւ, մեկն աչ սուր,  
—Կաղաց ինկաւ ցաւագար :

«Ատե՛կ անվարձ եւ, կրսե՛,  
Մեջ տեղն ելաւ փորձաւուն,  
Մափե՛ր, պրսակ դափնեի  
Պատաստեցիք ոչորուն» :

Ճընցեց իր բաշ ձիւնն պիւ,  
Վրդիկ կաշին խորշուցաւ,  
Ո՛սք երեքոցոց, գուր հսկողիս,  
Առկախ մընաց . ծաղիւր սուրաւ :

Յե՛ոյ, անե՛կ մեկ քերակ  
Փորձե՛կ, կրսե՛, սուր խորխիւնջ .  
Ան, դուրս չելաւ ուրիշ ձայն,  
Բայց սուկալի մեկ զրոյնջ :

ՇՆԱԲԹ

## ՍՏՔԻ ՅԵՂԱՓՈՒՆՈՒԹԻՒՆԸ

—(—)  
Հայկական հին կեանքը մեզ ան-  
ծանօթ է մնացել շնորհիւ Գրիգոր  
Լուսաւորչի : Հայոց առաջին եպիս-  
կոպոսը աւելորդ է համարել պահա-  
պել կոապաշտ հայի վաւոճուճ մտքի  
արտադրութիւնները, որոնք այսօր  
լայն գաղափար պէտք է առային հին  
հայոց մասին :

Քրիստոսի փոխանորդները ոչ մի  
տեղ այնքան խստութեամբ չեն վե-  
րաբերվել զէպի ազգերի հին մտաւոր  
արտադրութիւնները որքան մեզա-  
նում : Այսօր ամէն ժողովուրդ լաւ  
գաղափար ունի իր կոապաշտ պա-  
պերի մասին, իսկ մենք ունենք  
զրեթէ հնարովի պատմութիւն, այն  
էլ միայն նախարարներ, թագա-  
ւորներ և կաթողիկոսներ : Իսկ  
ի՞նչ տեսակ էր ապրում Հայաստանի  
պէս հրաշալի եւ զանազանակերպ  
երկրի հայ ժողովուրդը, ոչինչ գի-  
տենք : Միայն կարող ենք երեւա-  
կայել որ հին հայերը վաւոճուճ  
մտքով, աշխուժ, կամքով ժողովուրդ  
էին, որովհետեւ մեզ հասել են կոա-  
պաշտ հայերի մի քանի աւանդու-  
թիւնները, բանաստեղծութիւնները,  
եւ վերջապէս Հայաստանի պէս լեռ-  
ներ, հովիտներ, արագավայր գետակ-  
ներ, վճիռ լճակներ, սիրուն ան-  
տառներ ունեցող մի երկիր չէր կա-  
րող սովորական ժողովրդի ծննդա-  
վայր լինել :

Հայ ժողովրդի մի քանի հազար  
տարվայ, մանաւանդ իր ամենագո-  
րեղ եւ փայլուն ժամանակի կեանքը  
թաղված է պատմական խաւարի մէջ,  
ուրեմն եւ մենք չենք կարող ասել  
թէ այդ առաջին ժամանակամիջո-  
ցում աւելի բաղմաթիւ, աւելի զօրեղ  
հայերի մէջ ինչ մտաւոր շարժում է  
տեղի ունեցել :

Մեզ աւելի ծանօթ է Քրիստոսնե-  
ա հայութեան կեանքը, այն էլ  
շնորհիւ լուսամիտ Մովսէս Խորենա-  
ցու, որին ժամանակակից մտւոսանդ  
ու ազգա հոգեւորականութիւնը կա-  
տաղի կերպով հալածեց եւ այն վայ-  
րենութեան հասաւ, որ նոյն իսկ  
մեծ հայի մահից յետոյ, ուզեց վրէժ  
լուծել այդ հայ լուսամիտ մարդուց  
և նրա ոսկրները գերեզմանից հա-  
նելով նետեց այս ու այն կողմ :

Ինչպէս չը կատաղել երբ Մովսէս  
Խորենացու նման մի հայ միտք հա-  
լածվել է ժամանակի պորտաբոյծ եւ  
վայրենու չափ սպէտ հայ հոգեւորա-  
կանութիւնից, մի մարդ, որը եթէ  
չը լինէր, գուցէ մենք հիմա բոլոր-  
վին չիմանայինք թէ ո՞վ ենք . . .

Քրիստոսեայ հոգեւորականութիւ-  
նը հայ միտքը կաշկանդեց Քրիստոսի  
ազատ ոգուն բոլորովին հակառակ

նեղ շրջանակի մէջ. ճիշդ է այդ հոգեւորականութիւնը ունեցաւ իր վեհ ներկայացուցիչները, ինչպէս Մեարոյ, Ներսէս մեծ, Ենարհալի, Սահակ Պարթեւեալեան, սակայն նրա մեծամասնութիւնը զբաղվեց մեծ ու փոքր ինքնակենտրոն, փոքրամտաբանութեամբ, կորովը, կամքը ու միտքը թուլացնելով, եւ նոյնչափ աջակցեց հայութեան անկման որչափ նախարարները ու թագաւորները:

Կրօնամոլ, նեղահայեաց, ինքնիզուատ հոգեւորականութեան շնորհիւ թուլացաւ, բարոյապէս բնական թէ հայ ամբողջը, թէ ազնուականութիւնը եւ թէ հայ թագաւորները: Խորհաւ, ազատասէր հայը դարձաւ մի ոչխարի հոտ եւ եղաւ խաղալիք կաթնուղիկաների, թագաւորներին ու նախարարներին ձեռքում եւ վերջն էլ ստացաւ անմիաբան մակդիրը նրանց կողմից, որոնք էին անմիաբանութեան իսկական պատճառը: Ի հարկէ այդ տեսակ պայմաններում ոչ մի մտաւոր շարժում չէր կարող տեղի ունենալ անկեալ հայոց կեանքում եւ այն երկրում, ուր բերդերի եւ ամրոցների փոխարէն եկեղեցիներ չէին վիցին եւ բոլորի մտքերը սեղմվեցին կրօնական նեղ շրջանակի մէջ ու վերամբարցան երկինք, մոռանալով որ երկրի ու երկինքի արարիչը մարդին պատուիրել է ապրել աշխարհում:

Հայի բարոյական եւ մտաւոր մեղմանը թիրեց մինչեւ դարիս կէսերը. եթէ չը հաշուենք Մխիթարեանց գործունէութիւնը, որոնք շատ հեռու լինելով երկրից ու շատ միակողմանի, չէին կարող ազդեցութիւն գործել ընդհանուր հայութեան միտքի վրայ:

Վերջապէս դարիս կէսերում Եւրոպական մտաւոր շարժումը ծով ու ցամաք ճեղքելով անցաւ եւ դէպ ի Փոքրը Ասիա: Բոլորովին մեռած հայ ժողովրդի ամուլ կարծուած արգանքից ծնվեցին Օտեան, Սէրվիլէն, Ռուսինեան, Բեշիկթաշլեան, Դիւրեանց Տաճկաստանում եւ Նալբանդեան, Նազարեան, Արծրունի, Բաֆթի, Գամաղաթիպա, Արովեան Ռուսահայաստանում: Եւրոպական մտքով լուսաւորված այդ վիթխարի հայերը տեսնելով իրանց գոթախտ ազգի անկեալ վիճակը, զգացին որ միայն ազատ ու լուսաւոր միտքը կարող է ազդել այդ անասնական գրուածքներից հանել: Չզայցին եւ անվիհեր կերպով բացարձակ կախ հրատարակեցին բոլոր այն հայ տարրերի դէմ, որոնց համար ցանկալի էր միշտ հայ ժողովուրդին տեսնել անկեալ եւ կոյր-կուրը զարմանալի սաստկութեան հասաւ. կռոււմ էին լոյսի եւ խաւարի ներկայացուցիչները. ծնեց մտքի յեղափոխութիւնը եւ իրան յատուկ կարողութեամբ ջանջախեց այն բոլոր կեղծաւոր փարիսեցիներին, որոնք կողորդելուս արցունքներով սգում էին հայի անասնական վիճակը վերանալու վրայ:

Այո, հայ փարիսեցիները որոնք մինչեւ հիմա լուս ու մուսջ գիտում էին իրանց ձեռքով աւերված հայրենիքի աւերակները եւ տիրող խաւարը, յանկարծ ճիշ ու զաղան բարձրացրին երբ տեսան լոյսի հոսանքը. սակայն արդէն ուշ էր...  
ՎԱՐԴՈ

ՆՈՐ ԵՐԵՒՈՅՔ ՄԸ

Անցեալ օր ծանուցինք թէ տեղւոյս եկեղեցիին մէջ Վարդանանցի հանդէսին պահուէն հանդանակութիւն մը կատարուած էր ազգային վաս-

տակաւորի մը համար: Կը լսենք թէ այդ գումար ողորմութեան նպատակին ծառայելով հանդերձ յատկացուած է վառնա հրատարակուող փողոցային թերթի մը, ուսկից երեք օրինակ պիտի դրկուին եղեր ազգային երեք վարժարաններու, Պուրկազ, Եռեմլու, Վառնա:

Գինեատան, հանրատան ու նմանօրինակ գարջ ու լպիրջ նկարագրութիւններով ազատուած թերթի մը մուտքը ազգային մասնակցներու բարոյականութեան մարտը տաճարին մէջ, նորութիւն մըն է: Հետաքրքիր ենք գիտնալ թէ այդ թերթը պիտի ընդունուի՞ սոյն վարժարաններուն մէջ, եթէ այո, մեղ կը մտաւորապէս մեր ազգային դաստիարակութեան ղեկավարները, որովհետեւ մեր մասնակցները այլեւս զպրոցի գրասեղաններուն վրայ պիտի սորվին բոլոր այն բաները զորոնք ինքն իր փամբակներուն մէջ մարդ հաղիւ 30—40 տարեկանին կրնար հասկընալ:

Օ՞րհնքորս, օ՞ւորհն:

ՓԱՆՍԱԿԱՆԻ ՅԵՆԱԿԱՐԱՆ

ՀԱՍԿԵՂԻ ԿՈՏՈՐԱՆԸ

—(—) (4)

Գարնան հանդարտ առտուան մը խաղաղութիւնը կը արիւր գուրբ. եթէ աչուրնուս առջեւ չըլլար անօրինակ աւերը որ ամէն կողմ կը սփռուէր, պիտի ենթադրէինք որ երազի մը, ցնցողական մղձաւանջի մը խաղալիկն եղած էինք:

Այդ տեսարանն խրախուսուած, որոշեցինք դուրս ելլալ մեր գետնափոր գերեզմանէն. բացինք երկաթէ դռնակը ու էն անհամբերները էն առաջ դուրս ցատեցին կոխկռտելով ջախջախուած նիւթերու, ապակիի, գաւաթի կտորտուքներու թանձր խաւ մը, արդիւնք հրէական շահատակութիւններու:

Վերի յարկը, տեսարանը ահաւոր դարձաւ. տանը փայտեղէն կմախքը մնացած էր միայն. փողոցի դռները կոտորուած էին. դուրսը, սալարկին վրայ, կը շարունակուէր ջախջախուած իրերու սփռումը: Մարդու ձեռքը որ հրաշակներուն կարտագրէ, կարտագրէ եղեր ասանկ կործանումի եր ալ:

Երկար փիլիսոփայական խորհրդածութիւններու վայրկեանը չըլլալով, ամէնքս մէկանց դուրս ելանք աւերակներուն մէջէն ու եկեղեցի նստուեցանք, ուր արդէն մեղի կանխած էին հարկբաւոր կրկնի, աղջիկների, տղաքներ ու երիտասարդներ:

Ամէնուն դէմքին վրայ մահատիպ թաղկութիւն մը կը տրեք: Փայտեղէն ազատելու անխորհուրդ ածապարանքին մէջ, շատեր կորսնցուցած էին զերթը. որը իր եղբայրը կողբար, որը իր հայրը, մայրը, որը զաւակները: Ու կը հասնէին շարունակ, աղաղակներու, կոծերու եղբերից մը տարածելով գոթախտ Հասգեղի փողոցներէն մինչեւ եկեղեցին, ուր ամէնքը կը կեղբոսանային, կը խտանային միասնապ ողբ մը ձեւացընելով հոն:

Դէպքին մանրամասնութիւններուն անտեղեակ, մէկ խմբակէն միւսը կը վազէի ու ծայրատուած պատմութիւններ, արեւոտ ու վերալից, միտքիս մէջ կը շինէին կոտորածին մեծ ամբողջութիւնը:

Սակայն իսկական շարքը հինգ-

շարթի առտու սկսած էր: Գիշերը քանի մը հարիւր քիւրտեր միմիայն յարձակած էին Պատէմլիքի վրայ ու նոյնքան թուով հրեաներ վարի, եկեղեցիին մերձաւոր թաղերուն վերայ. գիշին մնացած մասը տակաւին չէր ենթարկուած մահատիւտ խորշակին հարուածներուն:

Այդ առտուն Գասրմբաշայէն խումբ խումբ կը հասնէին քիւրտեր, լազեր, գինով ու կատաղի, եւ զարհուրելի ուժգնութեամբ կը նետուէին Չըգասալընի հայ տուններուն վրայ, կողոպտելով, կործանելով, ջարդելով: Յարձակումը այնքան անակնկալ էր եւ ուժգին որ ամէն մարդ միայն խոյս տալու եւ կեանքը փրկելու հետամուտ եղաւ: Ապա թէ ոչ, գոնէ այդ համբաւաւոր թաղին հայութիւնը իր պարտենակած յանգուզն երիտասարդներով եւ ոչ նուազ արիասիրտ կիներովը կրնար զինագրել վատասիրտ քիւրտերու վոնմակներուն եւ մինչեւ իսկ ես վանել զանոնք, պատուական դաս մը տալով:

Սակայն, քաջութեան դէպքեր պակաս չեղան հոն. մէկ քանի տուներէ, կիներ քարի ու կղմիւտարի տարախներով վանեցին յարձակողները. ու կը պատեն թէ Գառնիկ Խարախուլի անուն հայ մը փոխանակ փախչելու, բէվոլէրով զինուած, Չըգասալընի փողոցներուն մէջ միս մինակ ժամերով հալածեց քիւրտերը, տաս տասերկու հատ զիտապատ ձգելով անոնցմէ ու յետոյ, գինաթափ, ինքն ալ խեղդուելով չորս հինգ հարիւր կատաղիներու թաթառի մը տակ:

Իսկ Պատէմլիքի կողմը, նոյն չորեքշաբթի գիշեր, երկու երեք տուներ, ուր գէնք գործածող տաքզուլի երիտասարդներ կազմաւորին, մոլեգին կուր մեղեցին քիւրտերուն դէմ, գնդակներու տարաք մը տեղալով անոնց քիթին բերնին ու թող շտալով որ գոնէ այդ գիշեր շրջակայ տունները զոհ երթան յարձակման:

Հոս ճիշդ տեղն է ըսել թէ Հասգեղ զոհ գնաց նախաստու թեան սխալի մը անոնց կողմէ որոնք պատրաստեցին 96ի մեծ ցոյցը: Մինչ Սամաթիա, Գուրգաւու, Սիւրտար եւ ուրիշ հայաշատ կեղբոսներ կը պատաղինուէին՝ պատրաստ ու եւ յարձակման, Հասգեղ շատ թեթեւ ու հարեւանցի հոգածութեան մը առարկայ կըլլար:

Պէտք էր հաշուել որ Պուլսոյ ամենէն հեռաւոր հայ կեղբոնը, որ յարձակման մը ենթարկուելու մեծագոյն հաւանականութիւնը ընծայէր, Հասգեղը կրնար ըլլալ:

Բայց շատ չենք ուզեր ծանրանալ այս կէտին վրայ, մանաւանդ որ անցածը անցած է:

Եկեղեցիին շրջափակը երթալով նեղ կուզար ապաստանածներուն, աւելի քան հինգ հարիւր տան մէջ սփռուած հայութիւն մը, իբր 3,000 հոգի, կուզար խճողուիլ հոն:

Սարափիլի լուրեր կը հասնէին հեռագեակէ. սիրտի մտերմներ, մանկու թեան ընկերներ, ծանօթներ գորս միշտ կը տեսնէի փողոցը, շողեւանէին մէջ, ամէն տեղ, շանթահար եղած էին ճոկանի հարկբաւոր հարուածներու տակ: Ճնորած էի ինչպէս կըլլայ մէկը որ առանց իր կիտնալուն լախտի մը ցունցը կղզայ վրին:

—Ա՞ն ալ միտուցին:

Անվերջ հարցում մըն էր այս որ բերնէ բերան կը տարածուէր կսկիծի հառաչներ խլելով, կատաղի յիշոց-

ներու ընկերակցութեամբ: Կարծես ցնորքի մը մէջէ կը քալէի, շուրջս, ամէն կողմ արիւն, գիակ, մահուան զալարում միայն տեսնելով:

Նոր հասնող խումբերը, շնչասպառ, հեծեծաղին, կընդարձակէին արեան մեծ ճահիճը, որ բացուած էր Հասգեղի սրտին վրայ:

Մէկը, որուն կը հարցունէի թէ մեր ծանօթներէն ուրիշ ով կայ ըսպանուած, մէկէն ի մէկ ըսաւ.

- Մարտիրոսն ալ մեռուցի եւ:
- Մեր Մըսուօն:
- Այո:

Հեծիւն մը ելաւ կոկորդէս. անհուն կսկիծն ու զգացուած կատաղութիւն մը արցունքով լեցուցին աչքերս: Չէի ուզեր հաւատալ. անոր ասոր կը գիմէի, ամէն կողմէ ալ մեղեւոյն անգութ հարուածն ընդունելով. Մոտոն մեռուցած էին:

Միտքով ու մարմնով առողջ ու զեղուն երիտասարդ մը, կեղբոսականի միջնորդարին մէջ սնած ու մեծցած, համակրելի, սիրուն ընկերակաւութեամբ մը: Ու քիւրտը ասոր ալ չէր խնայած, ու արիւնլոււայ գետին փռած էր, հէք մօրը աչքին առջեւ, գրեթէ անոր բազուկներէն խլելով:

Քու ազնիւ յիշատակը անջինջ պիտի մնայ բարեկամներու սրտին մէջ, ու ամէն անգամ որ զգանք ահաւորութիւնն այն մահին որուն զոհ գացիր, վրէժի ձայն մը պիտի գոռայ մեր ներսիցին, խեղճ Մոտոս:

ՇԱԽՍԹՇ

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն

—(—)

ԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ԲԱՐԻՐԸ

Թէեւ մեր ազգային ներկայ վիճակի մէջ իւրաքանչիւր հայ անհատ լարուած ուշադրութիւնով կը ձգտի միշտ զէպ ի հայրենիք՝ զէպ ի Սուրբ գործ—այդ միակ եւ ամենամեծ պահանջը հայութեան, բայց թող ներձի այս անգամ Շարժումի էջերը գոհեւնուս տարբեր նպատակի մը—անտեսագրիտական հարցի մը, — որը սակայն հեռի չէ անշուշտ հանրագոտ բնութիւն ունենալէ:

Ոչ ոք կարող է ուրանալ թէ ազգերի դարաւոր կեանքին մէջ, անոնց զարգացման գլխաւոր պատճառներէն մէկը եղած է նաեւ անտեսագրիտութիւնը: Ես չեմ կարող այստեղ երկար ճառել այդ հրաշագործ գիտութեան վրայ: Պիտի աշխատիմ ցուցընել միայն միջոց մը, որով թեւեւ կարելի ըլլայ քիչ մը շակել գոնէ մեր ֆիւնանսը: Ընթացիկ է թէ խնայելու հարկը կղզայ աւելի այն որ պէտք եղածին չափ չվաստկիր՝ քան ուրիշ մը որ արդէն պէտք եղածէն աւելի ունի... սակայն հազիւ ապրելու չափ վաստկող մը ի՞նչ պէս խնայէ, առանց իր անձը գրկելու: Ուրեմն թէ խնայել եւ թէ ըստ կարելոյն լաւ ապրել, կամ ուրիշ խօսքով, «քիչ գրամով շատ պիտոյք գոհացնել»: անաւասիկ հարցը:

Եւրոպայի լուսաւորուած ժողովուրդներն աւելի լրջօրէն կը քաղին այս տեսակ խնդիրներով: Ասկէջ 60—70 տարի առաջ Անգլիոյ գործաւորները—այն մարդերը, որոնց վաստակը միշտ համեստ եղած է—խորհեցան թէ ի՞նչ ընեն որ գոնէ քիչ մը աւելի լաւ ապրին իրենց անբաւական վաստակով, եւ անա ծնունդ առաւ հանճարող զաղափար մը—գործակցութիւնը:

Փոքր բացատրութիւն մը գործակցութիւն բառին. գործակցութիւնը կը լլայ երկու տեսակ, արտադրողական եւ սպառողական: Երբորքը վարկի գործակցութիւնն է, որուն վրայ այստեղ խօսել աւելորդ է: Առաջին տեսակին մէջ արհեստակից գործակցութիւնը են որ կը միանան եւ իւրաքանչիւր գործակից իր բաժնին ինկած գրամագրութիւնը գնելով կը մասնակցի ընկերութեան գործարանի շահերուն: Ինչպէս նաեւ վեասին: Այն տեղ ոչ գրամատէրը կը տիրէ իրեն բունաւոր եւ ոչ գործաւորը կը հեծէ իրեն ստրուկ: Ամէնքը հաւասար եռանդով կաշխատին՝ հաւասարապէս օգտուելու համար: Իսկ երկրորդ տեսակ գործակցութեան համար կը միանան սպառող զանազան անձնաւորութիւններ, — իհարկէ պէտք չէ արհեստակից ըլլալ, — եւ իրենց սպառած նիւթը մեծ քանակութեամբ գնելով թէ՛ սովորականն աւելի փոխ կապրին եւ թէ՛ կարեւոր վաճառատուն մը ընկերը կը լլայ իրեն գրամատէր: Ետտ երկար կը լլայ թուել այստեղ գործակցական այս հրաշալի գրութեան բոլոր բարեւոյնը: Բաւական է գիտնալ թէ այս սկզբունքները վրայ հիմնուած ընկերութիւններ հրաշալիքներ գործած են եւ անհաւատալի արդիւնքներ ատել բերած: Գործակցական հանձնարել գրութեան շնորհիւ Եւրոպացի աղքատ գործաւորներ պարբերական չնչին տուրքերով միլիոնաւոր գրամագրութիւններ շինած, բազմաթիւ գործարաններ, բազմահարուստ գրամատէրներ հաստատած եւ անպակն հարստութիւններ գրգռած են:

Եւրոպայի եւ Ամերիկայի, մանաւանդ Անգլիոյ հազարաւոր օրինակներն մէկը միայն յիշենք համառօտակի: Անգլիոյ Ռօքֆելլ քաղաքին մէջ 28 գործաւորներ համաձայնելով սկսան շարաթը նախ երկու քական եւ ապա երեքական բէնս (18—27 սնիթ) վճարել եւ 1844ին 28 սակի — մարդ գլուխ մէկ սակի — գրամագրութիւն գոյանալով, քանի նպարավաճառի փոքրիկ խանութ մը, ուր կը ծախուէր առաջին անգամ միայն չորս տեսակ ապրանք. բրինձ, կարագ, մաքարոնիա եւ չոր ձուկ. բայց այդ մարդիկ հաստատ կամքի տէր եւ յարատեւող էին: Փոքրիկ կրպակը տակաւ ճոխացաւ: 1857ին արդէն մեծ վաճառատուն մը դարձած էր եւ եօթը ճիւղ ունէր 1. նըրպարավաճառ, 2. կերպասավաճառ, 3. մսավաճառ: 4. կօշիկակար, 5. դերձակ, 6. փեղուրագործ եւ 7. կեղտոնական միջերանոց, ուր ամէն տեսակ նիւթ մեծ քանակութեամբ կը վաճառուէր ուրիշ նմանօրինակ ընկերութեանց, որք իրենց օրինակէն քաջալերուած էին: Թօքսթըյնք կը ծախէին ընտիր եւ աժան բայց կանխիկ. եւ շնորհիւ հաւատարմութեան ու յարատեւութեան 1844ին 28 անգամով եւ 28 սակիով սկսած ընկերութիւնը տեսէք ինչ եղաւ. 1854ին ունէր 900 անգամ, 7,172 սակի զըրամագրութիւն, 33,364 սակի տեւտուր եւ 1763 սակի տարեկան շահ: 1864ին 1580 անգամ, 60,000 սակի զըրամագրութիւն եւ 5713 սակի տարեկան շահ. իսկ 1878ին 10,187 անգամ, 300,000 սակի զըրամագրութիւն եւ տարեկան շահ 50,000 սակի՝ այն է 1,250,000 ֆրանք զուտ շահ: Ասիկա զօրաւոր փաստ մը չէ՞ հաւաքական ուժի գերագոյն կարողութեան. եւ Եւրոպայի մէջ կը վիստան այսպիսի օրինակներ:

ՏԻԳՐԱՆ ԱՃԷՄԵԱՆ

ՎԱՐԴ-ՊԱՏՐԻՔՈՎԻ ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆԸ

—X—

Ինչպէս յայտարարած էինք մեր առաջին թերթին մէջ, առաջիկայ թիւէն պիտի սկսինք իբրեւ թերթօն հրատարակել Վարդ-Պատրիքովի յիշատակարանը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԲԵՐ

—)(—

ՏԵՍՈՒԹԻՒՆ

(ՔԱՒԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԸ)

Իսկապէս հանդարտութիւն մը չէ որ այժմ կը տիրէ Արեւելքի մէջ: Եթէ հեռագիրը մեզ կը զրկէ նուազ յուզումնալից լուրեր քան զեռ ոչ հեռաւոր այն ժամանակն ուր օր չէր անցնէր առանց բերելու խռովութիւններու, անկարգութիւններու եւ մերթ ոճիրներու բաժին մը. եթէ դիւանագիտութիւնը նուազ տենդով կը յուզէ խնդիրներ որոնք դարձեալ շատ աւելի մօտ չեն իրենց լուծմանը. եթէ պատերազմի, կոտորածի եւ յեղափոխութեան զրոյցները կը շըրջաբերին անհունապէս նուազ յամառութեամբ, յայտնապէս անոր համար է անշուշտ որ թուլացում մը առաջ եկած է այնքան խորապէս տակնուվրայ եղած այդ երկիրներուն մէջ, բայց նաեւ եւ մանաւանդ — ճշմարտութիւնը կուզէ որ բարձրաձայն ըսենք — անոր համար որ ուրիշ շահեր ծագած են որոնք մինչեւ մէկ աստիճան կը գրաւեն կառավարութիւններու եւ Արեւմուտքի ժողովուրդներու ու շաղկապութիւնը:

Մնաց որ, հանրային կարծիքը անկարող է յաւած մնալ միշտ միեւնոյն նիւթի մը եւ անխոնջ արթնութեամբ հետեւել թոյլ ու ոլորապտոյտ ընթացքին դէպքերու որոնք տեսարանի մը արագութեամբ չեն պարզուիր, — ընդհակառակը:

Համբերութիւն պէտք է, պարտքի զգացումն հարկ է վրձնապէս յարելու համար մութ, կնճռոտ, դժուարին խնդրի մը, որ փոխանակ ուղղուելու դէպի նպատաւոր վախճան մը ուղղակի նպատակին գացող գնտակի մը շիտակութեամբ, ամէն մէկ քայլին դժուարութիւններով ու նորանոր կնճիռներով կը խճողի եւ մերթ կը թուի ընկրկիլ: Ասկից զատ, երբ կարգ մը դահլիճներ յարմար կը գտնեն հանրութեան ու շըրջաբերածներու դէպքերու շարքէ մը որոնք կործանած են իմաստուններու նախատեսութիւններն ու ճարտարներու կարգադրութիւնները, որոնք տեսակ մը ճախողութիւն են ինքնակամ են եւրոպեան համաձայնութիւնը եւ որոնք վտանգաւոր կերպով աւելցուցած են Թուրքիոյ ազդեցութիւնն ու գիտակցութիւնն իր

ուժին վրայ, բնաւ զարմանալի չէ որ հաղարումէկ աւելի անմիջական, եթէ ոչ աւելի կարեւոր մտազբազումներու մէջտեղ Արեւելքի գործերուն հոգը ստորադասուի ու նսեմանայ Արեւմտեան քաղաքացիներու մեծ մասին մէջ: Եւ սակայն, հարկ չէ ծածկել թէ չարիքը հոն է միշտ, թէ վառարանը արծարծուն է եւ թէ կայծ մը նորէն կը բաւէ վառելու համար ահեղ հրդեհ մը որուն հանդէպ այլեւս անտարբերութիւնը անհարկի է: Առ այժմ մէկդի ձգենք այս կացութեան էն սուր եւ, գուցէ, էն վտանգաւոր երեւոյթը. Թեաւ ինչ մէջ Յունաստանի եւ Թուրքիոյ սահման դիմաց կեցուածքը, որ թըշնամութեանց ս'սեղէն ետք իբր մէկ տարի է վեր կը շարունակուի, սա անբեւեակայելի դանդաղութիւնը գրամական խնդիրը կարգադրելու ու վերջապէս թուրք բանակին նահանջը եւ հելլէն հողին ազատումը թոյլատրելու մասին, սա յաջորդական վիժումը բոլոր ուսումնասիրուած ծրագիրներուն՝ կրէտէի խոստացուած ինքնօրինութեան իրականացմանը համար, սա աւհամայ խոստովանութիւնը Եւրոպայի անգործութեան եւ սա ժպիրհ յաղթանակը Դրան եւ Ապտիւլ-Համիտի:

Այս բաներուն վրայ շատ ըսելիքներ կան: Լաւագոյն է դեռ քիչ մը եւս համբերութեան վարչն ընծայել տէրութիւններուն: Մենք կուզենք խօսել ծանր միջադէպերու մասին որոնք ծագեցան Պուլկարիոյ եւ Թուրքիոյ միջեւ: Ինչպէս գիտենք, առաջինը ոչ չարամտութիւն ցոյց կուտայ ոչ չարակամութիւն. կը ջանայ լաւ յարաբերութիւններ մշակել իր վեհապետին հետ: Արդ, Պուլկարիա ստիպուեցաւ ծանուցագրով բողոքել Մակեդոնիոյ իր ցեղակից եղբայրներուն վրայ եղած ոճիրներու, մէկ քանի բնակիչներու սպանման եւ Սկիպի գաւառին մէջ ամբողջ գիւղերու տանջանքի ենթարկուելուն դէմ: Դուռը քրննութիւն մը խոստացաւ: Բան մը չըրաւ կամ լաւ եւս անկողմնակալ քննութեան մը գործն յանձնեց վալիին, որ ինքն ալ ամբաստանուած էր, եւ կազմուած յանձնաժողովի մը:

Ասիկա դառն հեգնութիւն մըն է: Ի վեր Դուռը հրաւիրեց օտար օրագրողները՝ երթալ տեղւոյ վրայ աչքով տեսնել իրողութիւնները: Անոնք լաւ գիտեն թէ ինչ կարծէ ապահովութեան այս երաշխիքը եւ անոնցմէ ոչ մէկը չուզեր երթալ աւելցնել զոհներուն թիւը:

Իրերը չեն կրնար այսպէս մընալ: Պուլկարիոյ համար պատուի եւ շահու խնդիր է առաջ տանել նմանօրինակ գանգատներու կրկնումը: Իրեն համար անգար-

մանելի անկում կը լլայ առանց վրիժառութեան թողուլ այս անբեւեակային, այս չարչարանքները, այս տանջանքները: Կը գործէ եւ պիտի գործէ: Մարտի վերջը, երբ արտորուած սպաներու դարձին վերաբերեալ բանակցութիւնները գաղբին Ռուսիոյ հետ, Յէրատիանտո իշխանը ֆեթերսպուրկ պիտի երթայ, եթէ սակայն ներքէ իր մօր առողջական վիճակը:

Անիկա պիտի գտնայ հոն ընդունելութիւն մը այնու մանաւանդ նպատաւոր զի հաւանած պիտի ըլլայ լաւագոյն պայմաններու Ձարի հիւրերուն համար, եւ այն ատեն Սկիպի կոտորածներուն եւ տանջանքներուն խնդիրը մեծ կարեւորութիւն պիտի ստանայ: Ի՞նչ մարդ կը հարցունէ ինքնին թէ ինչ չարաբախտութեամբ մը Թուրքիոյ ոտքը արեան մէջ կը սահի միշտ այն ատեն իսկ երբ բախտը կսկսի ժպտիլ իրեն եւ թէ ինչպէս այնքան ցաւագին փորձերէ ետք, որոնք փրկարար ըլլալու էին սակայն, Սուլթան, Վէզիր եւ Դուռ կը մերժեն իրենց ցուցուած պահուն գարմանել այս ոճիրները ընդդէմ մարդկութեան եւ ընդդէմ բուն իսկ իրենց գերագոյն շահուն:

—o—

ԵՆՐԿԻՈՍ ԵՒ ԳՆՏԱԿ

Յայտնի է թէ ձախող պատերազմին հետեւանքով ինչ անել կացութեան մատնուած էր Եւրոպիոս թագաւորը: Ատելի դարձած ըլլալով բոլոր ուժը կը թափէր ժողովուրդը շահասիրելու: Սակայն շատ դանդաղ էր կորսուած ժողովրդականութեան վերադարձը, երբ ահա հրացանի եօթը վրիպած գնտակներ Եւրոպիոսի օգնութեան հասան, եւ ամէն ատենէ աւելի հաստատեցին զայն գահուն վրայ: Զինք դատափետող մամուլը այս պահուս միահամուռ համակրանք կը յայտնէ թագաւորին, եւ կը դատապարտէ արքայապանութեան այս փորձը:

Համակրական այցելութիւններ եւ հեռագիրներ կը տեղան: Աթէնքի ժողովուրդը խնդութեան ցոյցեր ընել կը պատրաստուի: Եկեղեցիներու մէջ գոհարանական աղօթքներ կը կատարուին: «Անկցի» տխուր յանկերգիւ կը յաջորդեն որոտնդոտ «կեցցէ» ներ:

—

ԷՄԻՆ ԶՈՒԱ

Պ. Էմին Զօլա եւ «Օռոտ» տնօրէն Պ. Բեռէն, որոնց դատապարտութիւնը արդէն ծանուցինք, վերաքննութեան դիմած են: Հետեւապէս պիտի վերսկսի այս մեծազոր դատը, իր վրայ դարձնելով աշխարհի ուշադրութիւնը:

—)(—

Ս. Փ Ր Կ Ի Չ

—)(—

Իշխարիտիկինն կէօրէ Եէտի Գուլէ խաստահանէսի կայէթ տար հարտէ պուլունըյօր Եւրը: Թիւրք- Լէրին սօն վահշիլիքլէրի սէպէպի Իլէ, օրատա երզըմըլ օլան սիւ- չարէլէր, պու արա զիյատէ չօ- զալմըլ տըր: Հալպուքի, Եյի կիւնլէրաէ հոգաբարձուլըլը սէ- վինճլէ գապուլ իտէն աղնուա- շուք Եֆէնաիլէրիմիլ շիմտի ու- զազ գաչմազա օլուպ Օրմանեան օնուն պուլուն գաբուսընը չալ- մագաան արթըք պըզմըլ տըր: Էֆէնաիլէրին պու հարէքէթի Ի- չիւն թէէսիւֆ պէյան իտէրէք միլլէթիմիլիկն հասթա, Եօքսիւլ վէ իրթիլյարլարը վըգայէ իտէն պիւր թանէճիք պու իասթահա- նէմիլի հէր թարաֆլարտա պու- լունան միլլէթաաշլարըմըլըն հիմնէթ վէ մէրհամէթինն հէ- վալէ իտէրիլ:

ԲՕԼԻԹԻԳԱ

—)(—

ՀԱՅԱՍՏԱՆԸՍ ԳԱՐԸՇԸԳԻԼԵԳ Սթանպուլտան փետր. 15 թա- րիսիլէ «Թան» չէքիլէն պիւր թէլէկրաֆ, Հայաստանաա Հայ- լար վէ Թիւրքլէր արաւնտա էրզըում, վան, Պիթիւս վէ Մուշ վիւլայէթլէրինտէ գալիլար վու- գու պուլմուշ օլաըլընը հազըպ, պու պապտէ թէֆէրուսթ պու- լունմատըլընը պէյան իտիյօր:

ՍՐՊԱՎԱՎ ԵՒ ԹՈՒՐԿԻԱ

Կէչէնտէ Սուլթանըն գրալ Մի- լան Սրպիա օրտուսընըն ումուճի գօմանտանը սըֆաթըլա վէրմիշ օլտուըլը Իմթիւս Նիշանը՝ Մա- կեդոնիա մէսէլէսինտէն սօլայը Թուրքիա իլէ Պուլկարիա արա- սընտա պիւր մարաղա զուհուրըն- տա Սուլթանըն Սրպիանըն մուա- վէնէթիմտէն Եմին օլմագ իսթէ- տիկինն Պէլլըատ հիւքիմէթ տաիթէլէրինտէ պիւր տէլիլ սա- յըլմագտա տըր:

ԹՈՒՐԿԻԱՎ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻԱ

Պապը Ալի թարաֆընտան Ըս- թանպուլ էլլէրլէրինն պիւր նօթա թագաթիմ օլունըպ, Գօսօվա վիւլա- յէթիմտէ Եիւլ սէքսէն Պուլկար մահպուսլարըն օրայա կէօնտէ- րիլէն գօմիսիօն թարաֆընտան սալը վէրիւրիկինի վէ հալընըլ Իքի քիշինին հապտաա պուլունա տըլընը խապէր վէրմիշ տիւր: Կէօյա մէքըիւր գօմիսիօն՝ մահպուսլար իւլէրլինն իճրա օ- լընան իսքէնճէլէրին գաթիլէն հալան օլաըլընը իսպաթ իթմիշ տիւր:

ԲՈՒՍԻԱ

Կէչէնլէրաէ Բուսիա մէարիֆ նազըրը Մ. Թէլեանեանց վէֆաթ իթմիշ օլուպ, անըն Եէրինն պու Օտօօրնիկ: Յ. Թախմիսյան

տէֆա պիւր Բուս Մ. Պակալէպօֆ նազըր նասպ օլունմըլ տըր: — Չարըն նէֆուս տօթու պու- լունան բրէնա Ուլթամակինին մէսուլիլէթի թահթընտա նէշը օլունան «Բէթրուպուրի Վէտուս» թիւ կալէթաաը պիւր Եհէմիլլէթ- լի պէնտտէ Եազըյօր քի Բուսիա- յա թապի օլան քիւշիւք միլ- լէթլէրի վէ խուսուսուսըլա էրմէնիլէրի թագիլիլ իթմէք նի- յէթի նէ միլլէթէվէֆա Յիլէքսանտըր Գ. նին վէ նէ աէ շիմտիքի Չա- ըըն բօլիթիլգաօնտա պուլունմըլ տըր, վէ պու Եֆէքաըլ պէյան իտէնլէր Եանըլմագտա տըրլար:

ԹԻՒՐԿ ԵՒ ՌՐՏՈՒՅԻԼ

Սէլանիքտէն «Թան» աթի- աէքի հազըյօր. Կէօրիւնիւր քի Սթանպուլտան Եմիւր կէլմիշ տիւր թէքմիլ պիւր օրտա մարա սօնու- նա գատար Մակեդոնիաա թօը- լամալ իչիւն, Սրպ վէ Պուլկա- րիա սինօրլարընտա կէլէճէք Ելը պահարտա իլէրի կէլէպիլիւր վու- գուսթլարա գարշը: Պիւր պէօյիւք ալայ զաթէն Սէ- լանիքտէն կէչիլ Մակեդոնիայ՝ Սկիւպէ վէ Գոսօվա վիւլայէթիլնն տօլըու Եօլա չըզմըլ: Էտհէմ փաշա պիւր գաչ կիւնտէն պէրի Գոսօվաաա պուլունմագտա տըր:

ՄԱԿԵԴՈՆԻԱՎ ԳՕՄԻԹԷՍԻ

Մակեդոնիանըն բէվիլիսին քօմիթէսի Ֆիլիպտէն պիւր ի- լաննամէ չըզարըպ պուլկար միլ- լէթիլինն քէնտի Մակեդոնիա միլլէթաաշլարընա մուսթէնէթ իթմէսինի վէ կէլէճէք Ելը պա- հարտա՝ պուլկար հիւքիմէթի- նին հարտըմը օլունն օլմասըն գալիլայա պաշլամասընը թէշվիլի Եաիյօր:

ՖԻԼԻՓ ԳԵՐՐԻ

Սթանպուլ Ինկիլիլ Էլլիսի Սըր Ֆիլիպ Գըրրի՝ Հոռմա Ինկիլիլ Էլլիսի Սըր Գլարֆօրտ Եէրինն Հոռմայա կիտէճէկիլին սէօյլէ- նիյօր:

ՀԱՎԱՏԻՍԱԸ

Գրալ Եօրիկուսը Էօլուիւրմէք իսթէլէրլէրինն պիւրիսի թուլթուլ- մըլ տըր: Էվվէլա օֆիցէր վէ շիմտի Աթիլնա պէլէտիլէսինտէ մէմուր վէ անճագ 27 հաշընտա վար ըմըլ: Կիլլի պիւր քիլուպէ ալիտ օլաըլընը պէյան Եթմիշ ի- սէ սէ, քէնտի շէրիքլէրլինն իսիմիլէրինն սէօյլէմէմիշ տիւր: Քարտիցին շէրիքի տէրաէթ օլունմըլ տըր: Եօրիկ իսիլնաէ Մակեդոնիալը պիւր ամէլէ ի- միշ: Աթիլնա բօլիսի՝ գաթիլլէր գուլմբանեասընըն տիկէր Գըս- մընը արամագտա տըր: — Վիէննաաա իսպէր վէ- րիլիլինն կէօրէ, բրէնտէս Գը- լէմանիլին ազըր հարտէ պուլուն-

նըյօր. Եիւրէք չարընթըլարը ազալմըլ վէ գուլվէթաէն տիւշ- միւշ տիւր: — Պապը Ալի քէնտի Էվրօրա էլլէրլէրինն պիւրէր նօթա Եօլա- յըպ՝ Թէսալիանըն պօշալմասըն- տան Էվվէլ Կիլիտ մէսէլէսինն սըքալա գօնըլմասընը Էվրօրա տէվլէթլէրլինտէն բէճա իթմիշ տիւր: — «Բէշլէր Լօյա» կալէթաաը Թուրքլանըն տաիլիլ իշլէ- րի հազընտա պիւր պէնա նէշը իտուպ, Բուլլէլի վիւլայէթ- լէրին հալը կիւն կիւնն ֆէնա- լաշմագտա օլաըլընը վէ տիւլէլ- մէյէտէ հիշ իսիլա օլմատըլընը վէ իսարիճի թէշվիլգաթլէ իլէրի կէլէն գարըլըլըլարընն Եօնիւ- նիւ ալընա պիլէ, Թիւրք մէ- մուրլարըն Եհալիլի թագիլիքտէն կէրի տուրմայաճագլարընը աշի- քեար սէօյլէմիշ տիւր: «Մալիւ- մաթ», տէթիլ իւլըրէ, պու պէ- յանաթը թէքիլիլ իտիյօր: — Հանեաաան «Սթանտարտա» չէքիլէն պիւր թէլէկրաֆա կէօրէ, ամիւրալար թարաֆընտան գա- րիթէն Ամօրէթի Ֆիլանսըլ աս- քէրլէրի իւլէրինն Թիւրք աս- քէրլէրտէն վէ զապիլթլէրտէն օ- լան հիւճիւմ իչիւն անլէրին ճէ- զալանմասընը ճէվատ բաշատան թալէպ իտէճէք իմիշ:

ՏԱԽԻԼԻՅԷ

Իրէնա Ֆէրտինանտ հազըլէթ- լէրլինն Եմրի իլէ, մէարիֆ նէ- զարէթի Պուլկարիանըն Թիւրք մէքթիլէրլինն իտէն օլմագ իւլ- րէ շու մէպուլարը վէրմիշ տիւր, 1,500 ֆր. Բրալատիա, 6,000 ֆր. Ֆիլիպէ, 2,000 Բազկրատ, 2,000 ֆր. Սիլիսթրէ, 1,200 ֆր. Սիլ- վէն, 4,000 ֆր. Բուսուզ, 3,000 ֆր. Բլէկուս, 4,000 ֆր. Ծուլա, 300 ֆր. Լօֆշա վէ 1500 ֆր. Չէքիւս քէօյիւն Թիւրք ճէմաա- թընա: — Սէլանիքտէ պիւր շիւպէ թէէ- սիսի իչիւն, Պուլկար միլլի պան- գասը գարար վէրմիշ տիւր:

«ՇԱՐԺՈՒՄ»-Ի ՊԱՏԱԹՈՒՆՆԵՐ

Տ. Ս. Գ. Ֆիլիպէ. — Չեր քարդն ստապանք: Անճի մը կոզմէ կզած յայտարարութիւնն անհիլի ու սխալ է: Կր ինչպիսիք որ աւելի թիւրթին ու զղութեանը ուշ գնէք քան հան- զիպած անճի բսածին: Այս բացա- տրութիւնը Եթէ կը գօհայնէ ձեզ, կրնաք ձեր յարմար տեսած կզանա- կալ վարուիլ: Գ. Ք. Փ. Կալաց. — Չեր զրկած նամակն ստապանք, առանց ընդու- նիւու 98ի կրկու տարեցոյցն ու 97ի կրկու յուսկուսածը: Ծնորճակալու- թիւն ձեր համակիր խօսքիւրուն հա- մար:

Թ Ա Տ Ր Ո Ն

—)(—

Այս գիշեր Պապահան Պէնլեան թատերախումբը Սլափոֆի սրա- հին մէջ պիտի ներկայացունէ յոյժ հետաքրքրաշարժ խաղ մը, «Աշխարհիս շըջանը 80 օրտան մէջ», որուն պատարասութեամբ կըրաղէր խումբը երկար առնէն ի վեր:

ՊՕՐՍԱ

Վառնա 21 ֆէսուար  
ՊՈՒՂՏԱՅ  
Վազօն, լիպրա 47—51, հէքթօլ. 8.50—9.30 ֆրանք  
Արապա, լիպրա 47—55 հէքթօլ. 9—11 ֆրանք  
ԱՐԲԱ  
Լիպրա 38—40 հէքթօլ 4.20—4.50 ֆրանք  
ՄԵՐՍԸՐ  
Վազօն, լիպրա 37—38 հէքթօլ. 5.80—5.90 ֆրանք  
Արապա, լիպրա 57—60 հէքթօլ. 6—6.20 ֆրանք  
ՖԱՍՈՒԼԵՍ  
100 օզգասը 19—25 ֆրանք՝ մալա կէօրէ  
Առապա մուսթէլէսի Նարօլէն 21 ֆրանք հիսապը իլէ տիւր.  
Կիւնտէ 2—3 վազօն վէ 15—20 ա- րապա պուլաւայ, 10—15 արապա ար- բա, 4—5 վազօն վէ 10—15 արապա մըսըր կէլմէքտէ տիւր:

ՏՊԱՐԱՆ «ՇԱՐԺՈՒՄ»-Ի

—)(—

Կը ապագրուին ամէն լնդուէ ալցեառմս, հասցեառմս, նամա- կազրուիս, հարսանեկան հրաւի- րագիր, մահալղչ ինչպէս նաև պրօշիւռնիւր:  
Փինեըն յոյժ գլււրամասշիլի:  
Ուրիշ քաղաքներէ եկած յանճարարութիւններ ճշգու- թեամբ և փութով կը կատար- ուին:

«Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ»

Վառնաի մէջ կը վաճառուի Մու- սալա, թահալիլ Կեօղիպէօյի քեանի իսանութը, Սասուն սրճարանի ծխա- վաճառին քով և Եպիւրբահման մզկիթին զէմը հայկական գրատու- նը, Ա. Չարհանէլիանի քով:

ՀԱՅԵԼԻ

ԱՉԳԱՅԻՆ ԵՒ ՉԱԻԵՏԱԿԱՆ  
—)(—  
Խոլպալի ՏՅօրեճ  
ՏԻՐԱՆ Գ. ՓԱՓԱՉԵԱՆ  
—)(—  
Սոյն երգիծարանական հան- գէսը, որ տարիէ մը ի վեր շա- րաթը մէկ անգամ կը հրատա- րակուի Վառնայի մէջ, բաւա- կան հաճելի կզած է իր ընթեր- ցողներուն:  
Ճարեկան բաժանորդալինն է Պուլկարիոյ համար 10 ֆր. վե- ցամեան 5 ֆր. արտասահմանի համար տարեկան 12 ֆր. վեցամ- սեան 5 ֆրանք:  
—)(—  
Սոչալ. Խր. Ն. Վոյնիկօօ Վարնա.